ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
27.12.2024թ. հարցման կարգով կայացած նիստի թիվ 8 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Արփինե Սարգսի Առաքելյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ք. Գասպարյան):

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Արփինե Սարգսի Առաքելյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ներկայացվեց Արփինե Առաքելյանի «Ծիծաղաշարժ չափազանցության ճանաչողական արժեքը Պ.Գ. Վուդհաուսի ստեղծագործություններում» թեկնածուական ատենախոսության թեմայի հիմնավորումը, արդիականությունը, հետազոտության նպատակն ու մեթոդաբանությունը (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն: Նշվեց, որ ծիծաղաշարժ չափազանցությունը մեծ տարածում ունի ժամանակակից անգլիական գրականության մեջ և հատկապես անգլիական երգիծական ժանրի նշանավոր ներկայացուցիչ Պ.Գ. Վուդհաուսի ստեղծագործություններում, որտեղ այն ոչ միայն հումորի գլխավոր աղբյուրն է, այլև այն ներգործությունը, որն ընթերցողը ստանում է, երբ իրականությունն ու խեղաթյուրանքը հակադրության մեջ են դրվում: Ծիծաղաշարժ չափազանցության ճանաչողական արժեքի ուսումնասիրությունը գեղարվեստական գրականության մեջ արդիական է, քանի որ ներկայումս նկատվում է գեղարվեստական գրականություն ընթերցելու հետաքրքրության անկում: Ոճական այս հնարի ուսումնասիրությունը՝ որպես ճանաչողական երևույթ հումորի և տարբեր ոճական հնարների փոխներթափանցված կիրառությունների հենքի վրա, որի միջոցով ձևավորվում են ընթերցողի աշխարհընկալման և մտածողության նոր ուղիները, կապահովի աշխատանքի նորույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ներկայացվող թեմայի կարևորությունը գեղարվեստական գրականության ընկալման, հասկացման ու մեկնաբանության ոլորտում՝ հաստատել Արփինե Առաքելյանի թեկնածուական ատենախոսության «Ծիծաղաշարժ չափազանցության ճանաչողական արժեքը Պ.Գ. Վուդհաուսի ստեղծագործություն-ներում» թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ք. Գասպարյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան
և գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

27.12.2024 թ.